ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 22 դեկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Մ. Թոփուզյանի
Հ. Նազարյանի

Քննության առնելով «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն 2010թ. դեկտեմբերի 6-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին եւ 8-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. Դիմողի կարծիքով, վիճարկվող դրույթը՝ 09.04.2007թ. խմբագրությամբ, միջամտություն է իր՝ տնտեսական գործունեության ազատությանը, քանի որ արգելում է իր կողմից գնահատված ռիսկերի համաձայն իրականացնել տնտեսական գործունեություն, ինչը չի կարող համատեղելի լինել տնտեսական գործունեության ազատության սկզբունքի հետ:

2. Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ, 28-րդ հոդվածների եւ 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ մասերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի անհատական դիմումը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ, ընդունել քննության, կազմել գործ:

2. Գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

22 դեկտեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-40